

ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏ ՔԵՐԹՈՂ ՇԻՐԱԶԻՆ

Շիրա՛գ, Շիրա՛գ, տերվիշ ֆերթողն հայրենիքիս,
 Մատաղ ըլլան մուսաներուդ սիրտս ու հոգիս,
 Եւ Շիրագի վարդերուն պէս անուշաբոյր,
 Քու խօսքերուդ հագար, հագար ես տամ համբոյր:

Շիրա՛գ, Շիրա՛գ, խօսնակն Հայոց նոր աշխարհին
 Ու ջերմ պաշտպանն ու պահակը հայ լեզուին,
 Ինչքա՛ն աւիւն ու կրակ կայ երգերուդ մէջ,
 Մորենի մ' ես դուն բոցավառ ու միշտ անշէշ:

Շիրա՛գ, Շիրա՛գ, ո՛վ մեծ ֆերթողն հայրենիքիս,
 Ո՞վ տուաւ քեզ սիրտն այդ ազուրը, գերգայուն,
 Որ՝ քնարիդ լարին վրայ միշտ թըրթռուն,
 Կ'երգես սէրը մեր լուսաշող հայրենիքին:

Շիրա՛գ, Շիրա՛գ, տերվիշ ֆերթողն հայրենիքիս,
 Պատգամդ յուզիչ, խանդավառող ու հոգեցունց,
 Ուղղեալ պանդուխտ, աստանդական եղբայրներուդ
 Ու քոյրերուդ, յուզեց հոգիս, սիրտս, գորովս:

Շիրա՛գ, Շիրա՛գ, անմահ ֆերթողն հայրենիքիս,
 Մատաղ ըլլան մուսաներուդ սիրտս ու հոգիս,
 Եւ Շիրագի վարդերուն պէս փայլեցրաբոյր,
 Հայ քառերուդ, Հայ խօսքերուդ անգուգական

Ու սրտաբուխ, հագա՛ր, հագա՛ր ես տամ համբոյր:
 Օրհնեա՛լ ըլլայ յիշատակը այն մայրիկին,
 Հայ մայրիկին, որ քեզ տուաւ սիրտ մը անգին:

Նայրուպի, Քէմիս

ՅՈՎՍԷԺ ԹԸԳԸՐԵԱՆ